ուղարկեալ թուղթ առ Մօսկօֆ և առ Պուղտան թէ Ահա՛ Տաճիկքս այսպէս նուաստութիւն ունին և կամին գալ ի վերայ ձեր պատերազմ, պատրաստ կալջիք և զէջ ի միջոյ ձերմէ վերուցէ՛ք, և ամենեքեանդ մի լինելով՝ հեշտ լինիցի աստ ի վայր գալ, և այլ բան։ Եւ զայս թուղթ գտեալ սոցին՝ եբեր օրս առաջի իւր վէզիրն, և նա ելեալ այն ճոխութեամբ գնացեալ, որպէս օրէն էր նորա և ուրախութեամբ, որպէսզի պսակեսցէ եւ պարգևս ինչ տացէ նմա բարութեան՝ ըստ առաջին բանիցն։ Եւ վէզիրն յառաջ զկնիքն նմին ցուցեալ թէ Քո՞յ է այս. և նա ասէ թէ Իմ է. և ցուցանէ անդ մեծամեծաց և իշխանացն վուզարային, և տայ ի ձեռս սուպաշուն՝ տանել ի բանտս մահապարտացն։ Եւ ի մօտ երեկոյիս քան զժամն յառաջ յետինքի՝ ատեան բերեալ սուպաշուն և հասասպաշուն մեծաւ սաստմամբ ի բանտէն, և մունետիկն առաջի նորա աղաղակելով գնայր թէ Թագաւորին խայինութիւն առնողին պատիժն այս է և լրտես լինողին պատուհասն այս է, մինչ ի տեղի կախաղանին։ Ի մէջ փողոցին[1]) և ի մէջ շուկայիցն անցեալ, տարեալ ձեռն ի կապ և չուան ի պարանոցն և ի գլուխն[2]) վեղարն իւր, նոյն կերպիւն և հանդերձիւն և մուշտակաւն և վեղարաւն բերեալ ի սահմանս միջի քաղաքիս որ ասի Պարմաղափու՝ կախեցին, եւ աշխարհս ամենայն ի տեսս նորա գնացին թէ Պատրիարգն[3]) Հոռոմոց լրտեսութիւն արարեալ և աստ են կախեալ։ Եւ ցառաւօտ բաց էր օրս, եւ երեկոյիս որ Կիրակի լուսանայր (22 Մարտ) ամպ եղեւ եւ անձրեւ, մերթ բացվէր եւ մերթ ձիւն գայր սառն քամով։ Եւ յետ կէս աւուրս եկեալ դահիճն զպատրիարգին կախելոյ զհանդերձն զամենայն առեալ ի վերայէն եւ մերկացուցեալ լոկ՝

1) փողոցն. 2) գլուխսն. 3) պատրիագն.